«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության ՀՀ կառավարության ազգային գործողությունների 2022-2024**թթ. ծրագրի հանձնառությունների կատարման վերաբերյալ**

Հանձնառության անվանումը	**Կատարման ընթացքը**
1. **Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենսդրության ձևավորում**	«Կիբեռանվտանգության մասին» և «Հանրային տեղեկությունների մասին» օրենքների նախագծերը մշակվել են Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից՝ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի հետ համագործակցությամբ: Նախագծերի տարբերակները ներկայացվել են հանրային քննարկման e-draft հարթակում - https://www.e-draft.am/projects/6656/about, https://www.e-draft.am/projects/6970/about: Կայացել են նաև մի շարք հանդիպում-քննարկումներ տարբեր շահառուների հետ՝ 1. 2023 թվականի հունիսի 27-ին հանդիպում-քննարկում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում - https://www.facebook.com/story.php?story_fbid=608902561348715&id=100066869280073&rdid=ZfcZDQPWXd5CTZZo# 2. 2024 թվականի փետրվարի 8-ին հանդիպում-քննարկում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում - https://hightech.gov.am//hy/tegekatvakan-kentron/ayl/norutyunner/draft-law-on-information 3. Նախագծերը նաև քննարկվել են Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովների հետ. 4. 2024 թվականի դեկտեմբերի 25, կայացել է հանդիպում-քննարկում OWASP Yerevan-ի հետ Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունում. 5. 2024 թվականի դեկտեմբերի 14, Կիբեռանվտանգության համաժողով Հայաստանի Ամերիկյան համալսարանում (ArmSec).

	6. 2024 թվականի նոյեմբեր 5, Կիբեռանվտանգության օրակարգի և խնդիրների շուրջ քննարկում ArmIGF-ի շրջանակում https://isaa.am/ru/articles : Հաշվի առնելով, որ նախագծերը սահմանում են ոչ միայն «տվյալ» հասկացությունը պետական կառավարման համակարգում և մասնավոր հատվածում և սահմանում դրա հետ փոխկապակցված բոլոր գործառույթները, այլև՝ սահմանում դրանց պաշտպանության և անվտանգության հարցերը: Օրենսդրական նախագծերը նաև նախատեսում են օրենքների նախագծերով սահմանված նպատակների իրականացման համար պատասխանատու մարմնի սահմանումը: ԲԿԳ ծրագրով նախատեսված էր առնվազն նոր օրենքների նախագծերը ՀՀ կառավարության հավանությանը ներկայացնելը 2024թ. դեկտեմբերին, սակայն հաշվի առնելով տարբեր շահառու խմբերի կողմից քննարկումների արդյունքնում բարձրացված հարցերը՝ դրանք վերջնականացման փուլում են: Օրենքների նախագծերը կարգավորելու են հանրային ծառայությունների ոլորտը՝ ապահովելով ավելի քաղաքացիակենտրոն ծառայություններ, փոխգործելիություն, մեկ անգամ տվյալի ստացում սկզբունքի կիրառում և այլն:
2. **Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության ձևավորում**	Ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության մոդելը մշակված է: Այժմ ՀՀ կառավարությունը աշխատում է իրականացնելու Ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության անցումային փուլի իրականացումը: 2024թ. դեկտեմբերի 26-ին Վարչապետի աշխատակազմում սահմանվեց «Մասնակցին և բաց կառավարման հարցերի» ստորաբաժանման ձևավորումը և գործառույթների սահմանումը՝ https://www.e-gov.am/decrees/item/27525/ : Այժմ իրականացվում է ստորաբաժանման համալրման փուլը:
3. **Տեղեկատվության ազատության ոլորտի ինքնագնահատման համակարգ**	Հանձնառությամբ սահմանված «Տեղեկատվության ազատության ոլորտի ինքնագնահատման համակարգ»-ը մշակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ և պիլոտային ներդրվել Վարչապետի աշխատակազմում, Էկոնոմիկայի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններում: Միաժամանակ, մշակվել և ներդրվել է տեղեկություն ստանալու վերաբերյալ միասնական վիճակագրական ձևաչափը՝

	ապահովելով միասնական ցուցիչներ: 2024թ. համար հրապարակվել են հետևյալ վիճակագրական տվյալները՝ 1. https://www.gov.am/files/docs/5526.pdf 2. https://www.mlsa.am/statistic-information-requestes 3. https://mineconomy.am/media/27701/Ardir-harcum.pdf
4. **Բյուջետային գործընթացում մասնակցային մեխանիզմների լրամշակում և ներդրում**	Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջի գլխավոր մենյույում ավելացվել է առանձին պատուհան՝ Բյուջե բոլորի համար անվանմամբ (տե՛ս https://minfin.am/hy): Պատուհանում առկա է 3 ենթաբաժին՝ 1. Քաղաքացու բյուջե և այլ բյուջետային տեղեկատվություն, 2. Բյուջետային տեղեկատվության հանրայնացում, 3. Մասնակցային բյուջետավորում: Ներկայումս իրականացվում են բաժինների համապատասխան տեղեկություններով համալրման/լրացման աշխատանքները: Ընթանում են քննարկումներ գործընկեր միջազգային կազմակերպությունների հետ՝ ավելի ինտերակտիվ գործիք մշակելու համար:
5. «**Մասնակցային բյուջետավորման» ներդրում տեղական մակարդակում**	1. ՀՀ ՏԿԵ նախարարության նախաձեռնությամբ մշակվել և ՀՀ բոլոր համայնքների աշխատակազմերին է տրամադրվել «Համայնքներում մասնակացային բյուջետավորման գործընթացների կազմակերպման և իրականացման» ուղեցույցը, որպեսզի վերջիններս 2025թ.-ին իրականացվելիք աշխատանքներում առաջնորդվեն դրանով: Ուղեցույցը տեղադրված է նաև ՀՀ ՏԿԵ նախարարության պաշտոնական համացանցային կայքում՝ https://mtad.am/pages/Participatory_budgeting հղմամբ: ՀՀ ՏԿԵ նախարարության նախաձեռնությամբ և համակարգմամբ 2023թ.-ին ձևավորվել է «Համայնքներում մասնակցային բյուջետավորման գործընթացների կազմակերպման և իրականացման» աշխատանքային խումբ, որի կազմում ներառված են նաև հանձնառության համակատարող Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և ՀՀ ֆինանսնաների նախարարության ներկայացուցիչները: Աշխատանքային խմբում պիլոտային երեք համայնքներից (Աբովյան, Աշտարակ և Արմավիր) բացի ընդգրկված են գործընթացին կամավոր միացած Ջերմուկ համայնքի, ինչպես նաև Գավառ, Սևան, Սիսիան համայնքների ՏԻՄ-երի և քաղհասարակության ներկայացուցիչները, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության

	գործընկերները: Մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնող՝ այժմ արդեն 21 համայնքների պատասխանատուների համար 2024թ. նոյեմբերի 6-ին կազմակերպվել է աշխատաժողով, որի հիմնական նպատակն էր ներկայացնել «Համայնքներում մասնակցային բյուջետավորման գործընթացների կազմակերպման և իրականացման» ուղեցույցի փոփոխությունները: Հանդիպման ժամանակ քննարկվել են նաև առկա խնդիրները և դրանց լուծումները՝ մասնակցային բյուջետավորման գործընթացը բարելավելու համար՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02zAu43JHFbpVanvPaVqu9tz1Row8XFhCSqs5zQyc5BfJaEa4kFFpNcMWQ4VaX3Tnsl&id=61552687064376 ՀՀ ՏԿԵ նախարարության հետ համատեղ, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ, հանձնառության համակատարող Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն (ՏՀԶՎԿ) ՀԿ-ի կողմից մշակվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ)՝ մասնակցային բյուջետավորման իրականացման էլեկտրոնային ենթահամակարգ՝ որպես գործընթացի կազմակերպման հիմնական էլեկտրոնային գործիք: Էլեկտրոնային ենթահամակարգը ներդրվել է ոչ միայն պիլոտային ծրագրում ներառված երեք համայնքների, այլ նաև՝ ՀԿՏՀ կիրառող բոլոր 70 համայքների պաշտոնական համացանցային կայքերում: Համայնքների ներկայացուցիչների հետ աշխատանքներ են տարվել էլեկտրոնային ենթահամակարգի կիրառությանը վերաբերող առանձին հարցերի պարզաբանման ուղղությամբ: Էլեկտրոնային հարթակը Աշտարակ համայնքի օրինակով՝ https://ashtarak.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=5ee31b77-481e-4cd7-bc38-630f2a44e6ae : 2. Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն (ՏՀԶՎԿ) ՀԿ-ի կողմից վերոնշյալ համայքնապետարանների համապատասխան աշխատակիցների համար իրականացվել են ՀԿՏՀ-ի մասնակցային բյուջետավորման ենթահամակարգի վերաբերյալ ուսուցումներ: Մշակվել և համայնքապետարաններին է տրամադրվել ենթահամակարգի կիրառության վերաբերյալ ուղեցույց: 3. Ներկա դրությամբ ՏՀԶՎԿ ՀԿ-ի կողմից մշակվում է էլեկտրոնային հարթակով քվերակություն կատարող բնակիչների՝ հարթակում գրանցման և նույնականացման

	հնարավորությունների ավտոմատացման մոդուլը, ինչը կնպաստի քվերարկության գործընթացին ավելի շատ բնակիչների մասնակցությանը և հնարավոր կեղծ քվեարկությունների բացառմանը: Պիլոտային Արմավիր, Աբովյան, Աշտարակ, ինչպես նաև Ջերմուկ համայնքներում ավագանիների կողմից հաստատվել են մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին ավագանիների որոշումները. - https://abovyan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=4ad31cd6-ceb4-4db6-b297-1a80d261a841 - https://ashtarak.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=be3e5d84-6589-462c-b74f-6be4de7de06f - https://armavircity.am/Pages/DocFlow/Def.aspx?a=v&g=98e94e9c-ce61-4d7a-8a9b-8cdd12ad40d7 - https://www.jermuk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=413de876-dcc4-421a-95f8-fb9805de63b4 : Մասնակցային բյուջետավորման շրջանակում 2023թ.-ին իրականացված ծրագրերից է, օրինակ, Աբովյան համայնքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում հիմնված ուսուցողական խաղահրապարակը՝ https://www.mtad.am/news/1723 , https://www.1lurer.am/hy/2024/07/30/1/1164956 : 3. Հիմնվելով վերոնշյալ պիլոտային համայքներում գործընթացի իրականացման արդյունքների և փորձի վրա՝ համայնքային մակարդակում մասնակցային բյուջետավորման տարածման և մասնակցային գործընթացների խթանման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և 2023թ. նոյեմբերի 2-ին ՀՀ կառավարության N 1890-Ն որոշմամբ (կցվում է) հաստատվել է «Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը»: 2024թ.-ին կարգը փորձարկվել է վերոնշյալ 4 համայնքներում և պետական բյուջեից այս համայնքներին հատկացվել է 500 մլն դրամ: Որաշման հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184645

	Պիլոտային 4 համայնքներում գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ են զետեղված ստորև տրված էջերում. https://www.abovyan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&nt=1&tv=-4&g=abfe05ca-7f42-4acd-9eaf-db76b40c1507 https://armavircity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=773565cb-1287-4374-975a-b7fdcd4aa95b https://ashtarak.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=5ee31b77-481e-4cd7-bc38-630f2a44e6ae https://www.jermuk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&nt=1&tv=-4&g=e79f41c4-9f1e-467d-bd70-90b7c38e7135 Վերոգրյալ փորձի հիման վրա, արձագանքելով կամավոր հիմունքներով մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու մասին ՏԿԵՆ առաջարկությանը, բացի պիլոտային 4 համայնքներից, 2024թ.-ին գործընթաց են նախաձեռնել և իրականացրել ևս 17 համայնքներ (Գյումրի, Ախուրյան, Վանաձոր, Ստեփանավան, Փամբակ, Թալին, Ծաղկահովիտ, Արաքս, Խոյ, Բյուրեղավան, Հրազդան, Չարենցավան, Մասիս, Գավառ, Դիլիջան, Արենի, Եղեգիս): Այս 17 համայնքներում ծրագրերը իրականացվում են բացառապես համայնքային բյուջեից հատկացված միջոցներով: Համայնքային բյուջեներից հատկացված գումարները եղել են 2 մլն-ից մինչև մինչև 20մլն ՀՀ դրամի շրջանակում: Վերը նշվածը հաշվի առնելով՝ ՀՀ կառավարությունն առաջարկով՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ 2025 թվականի պետական բյուջեով արդեն 1 մլրդ ՀՀ դրամ է նախատեսված տրամադրել 2025թ.-ին մասնակցային բյուջետավարում իրականացնող համայնքներին: Ստորև 17 համայնքներում գործընթացի վերաբերյալ հղումները. https://www.gyumricity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=de6cd68d-2bc6-4f4e-ae19-1266616d6bab https://cmis.vanadzor.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=c57e96c3-3792-435b-830c-3260a538369f https://www.akhuryan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=ad55efd0-c4ab-4f02-8dd0-fb6d1c4d4501

	https://gavarihamaynqapetaran.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=014384b4-a94d-40da-a744-0e49ab5b84b6 https://pambak.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=l&dt=as_process&tv=-4 https://khoy.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=1ef4bdad-9ff0-4ea4-91b4-7eb4b526cb4a https://arpaareni.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=l&dt=as_process&tv=-4 https://talin.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=05f3908c-eaaa-47fe-9875-119f47fe18ba https://araqshamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&nt=1&tv=-4&g=d66649a4-cea9-492e-a213-59e8713ebc89 https://www.byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=91820253-349b-41f0-8b1e-237999d2e3a0 https://www.dilijancity.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=l&dt=as_process&tv=-4 https://tsaghkahovithamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=13bc8765-4314-49c4-ac61-7ac1f6a3b4c3 https://hrazdan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=8578685d-2645-4c78-8322-162e1483e701 https://masiscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=f62d921f-8515-42d2-9af6-9ae7d7fa9c8d https://www.yeghegis.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=l&dt=as_process&tv=-4 https://www.stepanavan.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=l&dt=as_process&tv=-4 https://www.charentsavan.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=l&dt=as_process&tv=- Կամովի իրականացված ծրագրերից է, օրինակ, Թալին քաղաքի կենտրոնական հրապարակում ոտքերով նվագելու հնարավորություն ունեցող դաշնամուրի տեղադրումը՝ https://talin.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=1253 : **Իրազեկման գործընթաց**.

	Արմավիրի, Աշտարակի, Աբովյանի և Ջերմուկի համայնքապետարանների կողմից իրականացվել են քաղաքացիների իրազեկման աշխատանքներ՝ հանրային լսումների կազմակերպման, վարչական ղեկավարների, համացանցային պաշտոնական կայքերի, սոցիալական ցանցերի և այլ միջոցներով: 2. ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ին N 1890-Ն որոշումը լուսաբանվել է հեռուստաընկերություններով և զանգվածային լրատվության այլ միջոցներով: Համայնքներում մասնակցային բյուջետավորման գործընթացին զուգահեռ շարունակվել են դրա վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքները, որոնց առնչվող հղումները ներկայացված են ստորև. https://www.mtad.am/news/1604 https://www.mtad.am/news/1627 https://www.mtad.am/news/1693 https://www.youtube.com/watch?v=u-9czsWI0f0 https://www.youtube.com/watch?v=5RkHe7gXjQM&t=25s 3. Համայնքային մակարդակում մասնակցային բյուջետավորման գործընթացի կարևորությունն ընդգծելու համար 2024 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ ֆինանսների նախարարությունների համատեղ ջանքերով կազմակերպվել է «Մասնակցային բյուջետավորումը տեղական մակարդակում» խորագրով համաժողով: Համաժողովին ներկա են եղել Հայաստանից և արտերկրից ժամանած շուրջ 150 մասնակիցներ, այդ թվում՝ քաղաքականություն մշակողներ, մարզպետների և համայնքների աշխատակազմերի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, փորձագետներ: Համաժողովի վերաբերյալ հղումները. https://www.mtad.am/news/1739 , https://www.youtube.com/watch?v=6q4abjpiuIo
6. **Քարտեզագրական տարածական տվյալների և**	Նախատեսված աշխատանքների իրականացման շրջանակներում ազգային գեոպորտալ մուտքագրելու նպատակով իրականացվել են ՀՀ Արարատի մարզի՝ շուրջ 200,000 հա

մետատվյալների հասանելիությունը	մակերեսով ռելիեֆ քարտեզագրական բազային շերտի կամերալ պայմաններում մշակման և ստանդարտացման աշխատանքներ, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզի արդեն իսկ թվայնացված բազային քարտեզագրական շերտերի (մակերևութային ջրեր, ռելիեֆ և տրանսպորտային ցանց) ստանդարտացման՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջներին համապատասխան և ազգային գեոպորտալ մուտքագրման աշխատանքներ: Կարևորելով կադաստրային քարտեզներում ուղղման աշխատանքները՝ արդեն իսկ ուղղված են 500 բնակավայրերի կադաստրային քարտեզներ, որից 155-ը իրականացվել է 2024 թվականին: 2024 թվականի ընթացքում՝ շուրջ 20000 միավոր գույքեր նույնականցվել և ըստ անհրաժեշտության տեղադրվել են կադաստրային քարտեզներում: Մշակվել է ավտոմատացված ալգորիթմ, որը հնարավորություն է տալիս գույքերի գրանցման տվյալները համեմատել քարտեզագրական շերտերի հետ և հայտնաբերել անհամապատասխանությունները: Իրականացվել է նաև ՀՀ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանում աշխարհագրական օբյեկտների անվանումների վերաբերյալ տեղեկատվության թարմացման, ամբողջացման, ինչպես նաև անձնագրերի ստեղծման աշխատանքներ, որոնք յուրաքանչյուր աշխարհագրական օբյեկտի համար արտացոլվել են Ազգային գեոպորտալում: Անձնագիրը իր մեջ ներառում է հետևյալ տեղեկատվությունը. աշխարհագրական օբյեկտի ծածկագիրը, տեսակը, գրանցման և անվանակոչման ամսաթիվը, համառոտ նկարագրությունը և լուսանկարը: Տարբեր տեսակի վերլուծությունների իրականացման և մեթոդների կիրառման արդյունքում հասցեների ռեեստրը 2024 թվականին համալրվել է շուրջ 200,000 հասցեով, և այժմ ռեեստրում առկա է ավելի քան 1,200,000 ստանդարտացված հասցե: Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակում ներդրվել է հասցեների ռեեստրի քարտեզագրական բաղադրիչը, որը հասանելի է ՀՀ բոլոր համայնքներին: Ներդրված քարտեզագրական միջավայրը համայնքներին հնարավորություն է տալիս ստանալու անընդհատ թարմացվող տարածական տեղեկատվություն անշարժ գույքի հասցեների

	վերաբերյալ և ապահովելու ռեեստրի տեղեկատվական բազայի ամբողջականությունն ու ճշտությունը՝ սահմանված ստանդարտներին համապատասխան: Հարթակը ապահովում է գույքերի հասցեավորման գործընթացի պարզեցված ընթացակարգ՝ որոշ բաղադրիչների ինքնաշխատ ձևավորմամբ: ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1849-Ն որոշմամբ հաստատված կարգով էլեկտրոնային համակարգերի փոխգործելիության միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները կարող են միանալ Կադաստրի կոմիտեի կողմից «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին վեբ ծառայության միջոցով ապահովված հասցեների ռեեստրի տվյալներին: Հաշվետու ժամանակահատվածում համակարգի ամբողջական գործարկման նպատակով դեռևս 2024 թվականի սկզբից մի շարք գերատեսչությունների հետ համատեղ Կադաստրի կոմիտեում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են տարածական տվյալների ինտեգրումը ազգային գեոպորտալին սահմանված կարգով իրականացնելու գործընթացի վերաբերյալ հարցեր, առցանց քարտեզագրական ծառայությունների (WMS, WFS, WCS) միջոցով իրականացվել է թեմատիկ շերտերի ինտեգրում ազգային գեոպորտալին: Արդյունքում՝ ներկայումս ազգային գեոպորտալում արտացոլվում են Շրջակա միջավայրի նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Ներքին գործերի նախարարության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ավելի քան 20 թեմատիկ քարտեզագրական շերտերը (արգելավայրեր, ազգային պարկեր, բնության հուշարձաններ, ճանապարհներ, հանքային ջրեր, հիդրոտեխնիկական ենթակառուցվածքներ, էլեկտրահաղորդման գծեր, սողանքներ, ձնահյուսքեր, բջջային կապի ծածկույթներ և այլն): Այս պահին տվյալները գեոպորտալում արտացոլված են տարածական պատկերմամբ, սակայն ապագայում կապահովվի նաև ատրիբուտային տվյալների հասանելիությունը: Թեմատիկ տարածական տվյալների ինտեգրման բնականոն ընթացքը ապահովելու համար կոմիտեի մասնագետները պարբերաբար կազմակերպում կամ մասնակցում են այլ գերատեսչությունների կողմից կազմակերպվող քննարկումներին: Կարևորենք նաև ինտեգրված կադաստրի խորհրդակցական մարմնի հետ պարբերաբար կազմակերպվող նիստերը, որտեղ խորհրդակցական մարմնի անդամները ներկայացնում են իրենց կողմից իրականացված աշխատանքները, իրենց գաղափարները և բարձրաձայնում հուզող հարցերը:

	Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակում 2024 թվականին մեկնարկել են նոր բազմաֆունկցիոնալ ազգային գեոպորտալի ներդրման աշխատանքները, որոնք կշարունակվեն մինչև 2025 թվականի ավարտը: Նոր հարթակը ունենալու է ոլորտային թեմատիկ տարածական տվյալների ինտեգրման և փոխգործելիության ապահովման, ինչպես նաև գործիքակազմի լայն հնարավորություններ:
7. **Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստր**	ԲԿԳ 2022-2024թթ. գործողությունների ծրագրի 7-րդ հանձնառության ներքո սահմանվել է բարեվարքության համակարգի բաղադրիչ հանդիսացող նվերների ինստիտուտի կարգավորման նպատակով հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանում, ինչպես նաև նվերների հաշվառման և հանձնման կարգի առնչությամբ անհրաժեշտ կարգավորումների նախատեսում, մասնավորապես՝ նվերների հայտարարագրման թվայնացված ռեեստրի ստեղծում, որը կապահովի նվերների հայտարարագրման, դրանց գնահատման, ինչպես նաև տեղեկատվության հրապարակման ավտոմատացված լուծումներ: Հանձնառության գործողություններով նախատեսվել է օրենսդրական համապատասխան կարգավորումների նախագծում՝ այդ թվում՝ հաշվառման ենթակա նվերների շրջանակի, Հանձնաժողովի գործառույթների հստակեցման վերաբերյալ: Նախատեսվել է նաև էլեկտրոնային ռեեստրի ստեղծում և փոխգործելիության ապահովում: Նշված գործողությունների շրջանակներում հարկ է նշել, որ ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-540-Ն օրենքով (ընդունված՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ին) հստակեցվել է օրենքի իմաստով թույլատրելի համարվող նվերների շրջանակը, ինչպես նաև Հանձնաժողովին է վերապահվել նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերը, Ռեեստրում լրացման և

	հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույցը սահմանելու իրավասությունը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշմամբ սահմանել է վերոնշյալ կարգերը: Հանձնաժողովի նշված որոշումն ուժի մեջ է մտել 2024 թվականի հունվարի 1-ին: Միաժամանակ, 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունված՝ ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-148-Ն, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-149-Ն, «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենքներով վերանայվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքին առնչվող իրավակարգավորումները, արարողակարգային նվերների հաշվառման առանձնահատկությունները: Նշված օրենսդրական փոփոխությունների, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների կիրառման և հաշվառման գործընթացում վերհանված իրավական և գործառնական խնդիրների հիման վրա Հանձնաժողովը 2024 թվականին նախաձեռնել է Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված

	տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը հաստատելու մասին իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 01-Ն որոշման փոփոխություններ: Հանձնաժողովի՝ 2024 թվականի օգոստոսի 2-ի N 05-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Պետական արարողակարգի ծառայության՝ նվերների հաշվառման լիազորության ամրագրումը, վերանայվել է նվերների հաշվառման գործընթացը, հաշվառման ենթակա նվերների շրջանակը համապատասխանեցվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված կարգավորումներին, սահմանվել են շուտ փչացող կամ պահպանման էական ծախսեր պահանջող գույքի հանձնման կարգավորումներ և կատարվել վերը նշված օրենսդրական փոփոխություններից բխող այլ ներդաշնակեցումներ: 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 06-Ն որոշմամբ վերանայվել են նաև նվերների հանձնման գործընթացին առնչվող նորմերը՝ նախատեսելով առավել ճկուն ընթացակարգ վարչապետի, փոխվարչապետների, Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի նախագահի կողմից ստացվող նվերների հանձնման համար: Կատարված փոփոխությունները հնարավորություն են տվել ապահովել հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների հաշվառումը՝ հաշվառման ձևաթղթերի միջոցով և, սահմանված դեպքերում, պետությանը հանձնումը: Ի լրումն վերոգրյալի՝ 2024 թվականի դեկտեմբերին Հանձնաժողովի կողմից հանրային քննարկման է ներկայացվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծ,

	որով նախատեսվել են արարողակարգային նվերների վերաբերյալ Ռեեստրում առկա տվյալների հրապարակմանն առնչվող հավելյալ կարգավորումներ՝ պայմանավորված միջազգային հարաբերությունների առանձնահատկություններով: Միաժամանակ, Հանձնաժողովի կողից 2024 թվականի հունիսին մշակվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվության տրամադրման մեթոդական ուղեցույցը: Այն հասանելի է Հանձնաժողովի կայքէջում՝ https://shorturl.at/E2VAC: Նախքան Նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստրի գործարկումը՝ նվերների հաշվառման գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի հունվարի 1-ին հրապարակել է նվերների հաշվառման էլեկտրոնային ձևաթուղթը, որով իրականացվում է հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց ստացած նվերների հաշվառումը: Ձևաթուղթը հասանելի է Հանձնաժողովի կայքէջում՝ հետևյալ հղումով՝ http://surl.li/brewvh: Հարկ է նշել, որ 2024 թվականի 2-րդ կիսամյակում՝ համապատասխան կարգավորումների ուժի մեջ մտնելուց հետո, Հանձնաժողով են ներկայացվել նվերների հաշվառման ընդհանուր թվով 30 ձևաթղթեր, որոնց կարելի է ծանոթանալ Հանձնաժողովի կայքէջում՝ https://shorturl.at/KsU3p: 2024 թվականին աշխատանքներ են տարվել նաև Նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստրի կառուցման ուղղությամբ: Ռեեստրի կառուցման նպատակով ընկերության ընտրության համար մրցույթն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ընթացակարգերին համապատասխան:

	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում նվերների հաշվառման ռեեստրի կառուցման տեխնիկական նկարագիրը (առաջադրանքը) մշակվել և հաստատվել է 2024 թվականի առաջին կիսամյակում, իսկ ռեեստրի կառուցումն իրականացնող ընկերության ընտրության նպատակով ԱՄՆ ՄԶԳ կողմից հայտարարվել է մրցույթ 2024 թվականի ապրիլի 26-ին, որի շրջանակներում հայտերի ընդունման վերջնաժամկետ սահմանվել է մայիսի 24-ը: Հայտերի բացակայությամբ պայմանավորված՝ 2024 թվականի մայիսի 27-ին հայտարարվել է նոր բաց մրցույթ, վերջնաժամկետը սահմանվել է 2024 թվականի հունիսի 7-ը: 2024 թվականի նոյեմբերի 1-ին ԱՄՆ ՄԶԳ-ն կնքել է համակարգի կառուցման աշխատանքների պայմանագիրը՝ հայտերի գնահատման արդյունքում դրա պահանջներին բավարարած և հաղթող ընտրված ընկերության հետ: 2024 թվականի նոյեմբերին իրականացվել է Հանձնաժողովի կարիքների գնահատում, իսկ արդեն դեկտեմբերի 30-ի դրությամբ ավարտին է հասցվել համակարգի դիզայնի փաստաթղթի մշակումը (system design document): Պայմանագրով նախատեսվել է համակարգի կառուցումն ավարտին հասցնել 2025 թվականի առաջին կիսամյակում: Այն ամբողջությամբ հիմնված է լինելու Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգի վրա՝ որպես առանձին ինտեգրվող մոդուլ, ինչը կապահովի հայտարարագրման համակարգի հետ փոխգործելիությունը: Միաժամանակ, նախատեսվում է ապահովել ռեեստրի՝ այլ պետական մարմինների էլեկտրոնային շտեմարանների հետ փոխգործելիությունը՝ տվյալների առավել արդյունավետ փոխանցման նպատակով:

	Մինչ այդ նվերների հաշվառման գործընթացը կշարունակի իրականացվել Հանձնաժողովի կողմից մշակված էլեկտրոնային ձևաթղթերի լրացման և ներկայացման միջոցով: Հարկ է հավելել, որ Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում, հաշվառման գործընթացի կազմակերպմանը զուգահեռ, շարունակել է խորհրդատվություն և մեթոդական աջակցություն տրամադրել հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային իշխանության մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին՝ նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող հարցերի շուրջ: 2024 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել են նաև վերապատրաստումներ Վարչապետի աշխատակազմի, Ֆինանսների նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության աշխատակիցների, ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի, ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների, Ազգային ժողովի աշխատակազմի ներկայացուցիչների համար, որոնց, ի թիվս այլնի, ներկայացվել են նվերների ընդունման սահմանափակումներին, նվերների հաշվառման գործընթացին առնչվող հարցեր: Ընդհանուր առմամբ՝ 2024թ. ընթացքում իրականացված վերապատրաստումներին մասնակցել են շուրջ 270 հանրային ծառայողներ: Միաժամանակ, Ռեեստրի գործարկումից հետո դրա կիրառման վերաբերյալ թիրախային դասընթացներ կանցկացվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների ավելի լայն շրջանակի համար: Հանրային իրազեկման միջոցառումների շրջանակներում հարկ է նշել, որ 2024 թվականի հոկտեմբերի 28-ին և 30-ին Հանձնաժողովը երկու աշխատաժողով է կազմակերպել ՔՀԿ և

	լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, որոնց ընթացքում քննարկվել են նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող հարցեր: 2024 թվականի դեկտեմբերի 6-ին «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթ» խորագրով հանրային իրազեկման արշավի շրջանակներում տեղի է ունեցել «Նվերների ընդունման սահմանափակումների վերաբերյալ առկա կառուցակարգերը և իրականացված օրենսդրական վերջին փոփոխությունները» խորագրով աշխատաժողով: Աշխատաժողովին մասնակցել է նաև Հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող վերջին օրենսդրական փոփոխությունները և Հանձնաժողովի պրակտիկան: Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ 2025 թվականի հունվարի 27-ին ԱՄՆ ՄԶԳ կողմից Հանձնաժողովը տեղեկացվել է, որ ԱՄՆ նախագահի «Վերագնահատում և վերակազմակերպում. ԱՄՆ արտաքին օգնության ծրագրի» գործադիր հրամանագրի հիման վրա ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրին ծանուցում է ուղարկել դադարեցնելու բոլոր գործողությունները, որոնք իրականացվում են վերջիններիս համաձայնագրերի (ծառայությունների պայմանագրերի) շրջանակներում՝ մինչև իրավիճակի հետագա հստակեցումը:
8. **Էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ. Իրական շահառուների ինստիտուտի կատարելագործում**	2023թ. ավարտվել են էլեկտրոնային գնումների նոր համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները: Փաստաթուղթը 2023թ. մայիս ամսին դրվել է հանրային քննարկման, ինչպես նաև պատվիրատուների, քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել են դրա քննարկման և խմբագրման աշխատանքները:

	Տեխնիկական առաջադրանքը քննարկվել և հավանության է արժանացել Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից: Մրցույթի կազմակերպման նպատակով մշակվել և հաստատվել է գործընթացի կազմակերպման առանձնահատկություններ սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշում, որի հաստատումից հետո հարյատարարվել է երկփուլ մրցույթ: Նախաորակավորվել են թվով չորս կազմակերպություններ՝ AWS, Oracle, Ebidtopay և European Dynamics, որոնց հետ ներկայումս բանակցություններ են իրականացվում տեխնիկական առաջադրանքի և որակավորման չափանիշների գնահատման մեթոդաբանության վերաբերյալ: Ընդ որում, հաղթող մասնակցի ընտրության և պայմանագրի կնքման գործընթացը նախատեսվում է ավարտել 2025 թվականի ապրիլին:
9. «eCourt-statistics» **վիճակագրական վերլուծական գործիք**	«eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիքի մշակումը նախատեսված էր, որպես էլեկտրոնային արդարադատության համակարգի բաղադրիչ, որը պետք է իրականացվեր «eJustice» համակարգի գործարկմամբ: Ներկա դրությամբ «eJustice» համակարգը չի իրականացվել և Արդարադատության նախարարությունը քննարկում է այլընտրանքային կոնցեպտ, որտեղ կնախատեսվի նաև վիճակագրական վերլուծական գործիքի ներդնումը:
10. **Աշխատանքային պայմանագրերի հաշվառման և կնքման թվային համակարգի ներդրում՝ պետական և մասնավոր հատվածի համար**	Հանձնառության շրջանակում մշակվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսվել է ներդնել աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգ (այսուհետև՝ Թվային համակարգ) և աշխատանքային պայմանագրերի կնքումն իրականացնել այդ համակարգի միջոցով: Թվային համակարգի ներդրման վերաբերյալ նախագծերի փաթեթի քննարկման տարբեր փուլերում իրականացվել են նաև մի շարք իրազեկման աշխատանքներ: Մասնավորապես.

	• պատրաստվել է հրապարակում, որը տեղադրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում[1], ինչպես նաև՝ ֆեյսբուքյան էջում[2]: Նշված հրապարակումը մամուլի հաղորդագրության տեսքով ուղարկվել և տեղադրվել է մի քանի տասնյակ ԶԼՄ-ներում. • իրազեկումներ են իրականացվել նաև մի շարք այլ հաղորդումների և հրապարակումների շրջանակում[3]: «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը 04.12.2024 երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից (ընդունված 04.12.2024 ՀՕ-525-Ն և ՀՕ-526-Ն օրենքները կցվում են): Թվային համակարգի ներդրման միջոցով նախատեսվում է թվայնացնել Հայաստանի Հանրապետությունում թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածում կնքվող աշխատանքային պայմանագրերը՝ աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության համակարգի բարելավման նպատակով: Մասնավորապես նախատեսվել է Թվային համակարգի միջոցով աշխատանքային պայմանագրերի կնքման վերաբերյալ կարգավորումների ներդրում փուլային տարբերակով:

[1] https://www.mlsa.am/news/744
[2] https://www.facebook.com/mlsa.am/posts/pfbid031pbq3o2KVfwNRxbrPDz6xRqKe3ZTTn99zvJVkqe5PYYbYXteMJfPqTZHJroU6ubhl

[3] https://www.youtube.com/watch?v=nXJTlAU221s
https://www.youtube.com/watch?v=iCE8Y-4xzBY
https://www.youtube.com/watch?v=dgZ9Rb45Pw8
https://www.facebook.com/watch/?v=1068825577971331